ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 250 Ա

05-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 242Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի ղեկավարի 05-ը դեկտեմբերի 2025 թվականի «Ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայող՝ Սևակ Արմանի Խաչատրյանին բնակարանային հաշվառման վերցնելու մասին» թիվ 242Ա որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայող՝ Սևակ Արմանի Խաչատրյանին և նրա ընտանիքի անդամներին բնակարանային հաշվառման վերցնելու մասին»:

2.Եղեգիս համայնքի ղեկավարի 05-ը դեկտեմբերի 2025 թվականի «Ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայող՝ Սևակ Արմանի Խաչատրյանին բնակարանային հաշվառման վերցնելու մասին» թիվ 242Ա որոշման բովանդակության 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «1.Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայող Սևակ Արմանի Խաչատրյանին և նրա ընտանիքի անդամներ՝ Մարիետա Արտակի Հարությունյանին (կինը), Լուսե Սևակ Խաչատրյանին (դուստրը) և Գոռ Սևակ Խաչատրյանին (որդին) ճանաչել բնակարանի կարիքավոր և վերցնել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1)Սևակ Արմանի Խաչատրյանն Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ վնասվածք է ստացել հակառակորդի հետ շփման գծում, հակառակորդի նախահարձակ

գործողությունների հետևանքով (ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության պետ Ա. Ավետիսյանի կողմից 03/06/2025թ.-ին տրամադրված N 36/2821 տեղեկանքն, որն ուժի մեջ է անժամկետ):

2)Ներկա պահին Սևակ Արմանի Խաչատրյանի, նրա կնոջ՝ Մարիետա Արտակի Հարությունյանի, դստեր՝ Լուսե Սևակ Խաչատրյանի և Գոռ Սևակ Խաչատրյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի 24/06/2025թ. N US-24062025-99-058 և 24/06/2025թ. N US-24062025-99-059 տեղեկանքները):»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 22 ի. Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 251 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ, ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԽԱՉԻԿ ԷԴՎԱՐԴ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 06.12.2018 թ. թիվ 1419-Ն որոշման դրույթները, քաղաքացի Հասմիկ Առուշանյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի նախին բնակիչ, զոհված զինծառայող Խաչիկ Էդվարդ Մինասյանի ընտանիքին բնակարանային հաշվառման վերցնելու համար հարուցել վարչական վարույթ:

2.Հանձնարարել համայնքապետարանի բնակարանային հարցերի հանձնաժողովին կատարել դիմումում և կից փաստաթղթերում ներկայացված բնակարանային պայմանների ստուգում և ներկայացնել եզրակացություն:

3.Սույն որոշման կատարման պարտականությունը վերապահել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 22 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 252 Ա

18-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 118Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի ղեկավարի 18/06/2020թ. «Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Ջեմա Արամի Հարությունյանի և նրա ընտանիքի անդամների կողմից փաստացի օգտագործվող 24,1 ք/մ գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 118Ա որոշման բովանդակության մեջ «Սևակ Կարապետի Թենեքեջյան» բառերը փոխարինել «Սևակ Կարապետի Թենեքեշյան» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 25 հ.Եղեգիս